Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Բերդի Կ.Մարդանյանի անվան թիվ 3 հիմն. դպրոց » ՊՈԱԿ

Թեմա՝ Դասի պլանավորում:

Պլանավորման արդյունավետ եղանակներ:

Վերապատրաստող մենթոր՝ Էմմա Քոսակյան

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Ահարոնյան

2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Ինչպիսի հարցեր պիտի ներառի և ինչպիսի հարցերի պիտի

պատասխանի պլանավորված դասը……5

1.1. Ի՞նչ է պլանավորումն ընդհանրապես……5
1.2. Ինչպե՞ս ճիշտ գրել դասի պլանը……13

Գլուխ 2. Դասի պլանավորմանն ուղղված գործողությունների

վերլուծություն……19

Եզրակացություն……23

Առաջարկություն ……24

Գրականության ցանկ……25

Ներածություն

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը: Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր: Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար: [՛Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար՝, կիրառական ուղեցույց, հատոր 3]

Տարիներ շարունակ ուսումնական գործընթացքում կա կարծիք, որ ուսուցման գործընթացի հաջողությունը կախված է հիմնականում սովորողների հնարավորություններից և մտավոր կարողություններից: Սակայն կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ՝ կրթական ծրագրեր և դրանց բարելավում, ուսուցիցների մասնագիտական պատրաստվածություն, շարունակական ինքնակրթություն, ուսուցչի՝ հանրային դերի բարձրացում, կրթական պաշարների բարելավում, ուսումնական միջավայրի ստեղծում, ուսուցչի ամենօրյա աշխատանք: ՈՒսուցչի ամենօրյա աշխատանքը սկսվում է օրվա դասի պլանավորմամբ: Այսօր հանրակրթական պետական նոր չափորոշիչը արդիական մարտահրավերներ, նոր մոտեցումներ է պահանջում ուսուցչից դասի պլանավորման ուղղությամբ: Աշխատանքում ներկայացված են դասի պլանավորման արդյունավետությունը փաստող դիտարկումներ, որոնց միջոցով կբարձացվի ուսուցման և ուսումնառության որակը:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խորը և բազմակողմանի իմացությունը, այլև դասավանդման նպատակների հստակեցում և վերջնարդյունքների ապահովում: Դրան հասնելու լավագույն միջոցը դասի պլանավորումն է :

Հետազոտության նպատակն է պարզել, թե որքանով է արդյունավետ դասի պլանավորումը ուսումնական գործընթացում:

Հետազոտության խնդիրները.

1. ՈՒսումնասիրել դասի պլանավորման արդյունավետությանը առնչվող նյութերը:
2. ՈՒսուցիչների և աշակերտների շրջանակներում տարբեր մեթոդներով պարզել, թե որքանով է արդյունավետ դասի պալանավորումը:
3. Ամփոփել և վերլուծել հետազոտության արդյունքները՝ կարևորելով ուսուցչի աշխատանքաքային գրաֆիկի մեջ դասի պլանավորումը:

Հետազոտության վարկածը. Մենք կարծում ենք, որ ուսուցման արդյունավետության կարևոր պայմաններից է դասի պլանավորումը:

Հետազոտության մեթոդները՝ սոցոլոգիական հարցումներ, զրույց, քննարկում, դասալսում, համեմատում:

Հետազոտության ընտրանքը՝ ուսուցիչ , աշակերտ:

Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով Հ. Այվազյան ՝Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում՞ ուսուցչի ձեռնարկը, ՝Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար՞ կիրառական ուղեցույցի հատոր 3-ը, Ս. Խաչատրյան ՝Ուսուցման արդյունավետ հնարներ՞ գիրքը և մի շարք էլեկտրոնային աղբյուրներ՝ սույն աշխատանքում ներկայացրել եմ ՝Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակներ՞ թեման:

Գլուխ 1. Ինչպիսի հարցեր պիտի ներառի և ինչպիսի հարցերի պիտի պատասխանի պլանավորված դասը :

1.1. Ի՞նչ է պլանավորումն ընդհանրապես

Պլանավորումը կառավարման գործունեության բաղկացուցիչ մաս է և նպաստում է՝

- Նպատակներ սահմանելուն,
- Ծրագրերի ուրվագծմանը,
- Դրանց իրականացմանը,
- Միտված քայլերի մշակմանը:

Ուսուցչի աշխատանքն սկսվում է թեմատիկ պլանավորումից:

Երբ խոսում ենք կրթության բարելավումից և հաջողված կրթությունից, պիտի գտնենք այն աղբյուրը, որից սկսվում է այդ կրթությունը: Դա 45 րոպե տևողությամբ դասն է, որին ուսուցիչը կարող է պատրաստվել ժամեր շարունակ, որպեսզի 45 րոպե համատեղ գործունեության արդյունքում և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը դասասենյակից դուրս գան խանդավառված, ոգևորված և պատրաստակամ՝ շարունակելու այդ գործունեությունը կամ գործընթացը, քանի որ գաղտնիք չէ, որ այսօրվա աշակերտների մեծ մասը, մեղմ ասած, ՝ոգևորված՝ չէ գալիս դպրոց և մասնակից չէ դասապրոցեսին:

Դասապրոցեսում պետք է իրականացվի սովորողների գիտելիքների ձեռքբերումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը: Այսօր հանրակրթական պետական նոր չափորոշիչը ներկայացնում է դասին ներկայացվող պահանջները՝

- Նպատակների միասնություն,
- Դասի հստակ պլանավորում և նախապատրաստում,
- Դասի նպատակի և վերջնարդյունքի հստակ սահմանում,

- Դասի համար անհրաժեշտ բոլոր ուսումնաօժանդակ ժամանակի հստակ պլանավորում,
- Պարագաների առկայություն,
- Դասի գնահատում-անդրադարձ,
- Հին և նոր դասերի միջև կապի ամրապնդում,
- Առարկայական և չափորոշչային վերջնարդյունքների ապահովում,
- Համապատասխան ուսումնական մոտիվացիայի ձևավորում,
- Ինքնուրույն աշխատանքի կազմակերպում,
- Կարողունակությունների ձևավորում,
- Դասին՝ աշակերտների ֆիզիկապես, բարոյապես և հոգեբանորեն պատրաստ լինելը, որը շատ կարևոր է:

Դասի պլանավորումը սկսվում է դասի տիպերի ընտրությունից: Դրանք են՝

- Գիտելիքների ստուգման դաս,
- Նոր փաստերի և երևույթների հետ ծանոթության դաս,
- Գիտելիքների կրկնության և ամրապնդման դաս,
- Գիտելիքների ընդհանրացման և համակարգման դաս,
- Կարողությունների, հմտությունների ձևավորման ու ամրապնդման դաս,
- Համակցված կամ խառը դաս:

Նշվածներից որ տեսակով էլ ուսուցիչը պլանավորի դասը, պետք է պատասխանի 4 հարցի՝

1. Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ դասի ընթացքում:
2. Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտը միասին:
3. Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ առանց ուսուցչի միջնորդության:
4. Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Բոլոր այն հարցերը, որոնք պետք է ունենան պատասխան, անմիջականորեն պիտի կապվեն այն նպատակի հետ, որը դրել է ուսուցիչը մինչև դասը սկսելը: Այդ հարցերին պատասխանելու և հաջողություն ունենալու համար շատ կարևոր է դասի

սկիզբը: Եթե ուսուցչին հաջողվի հենց առաջին րոպեներից հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ, դա կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Այստեղ օգնության է գալիս **'ինչպե՞ս'** հարցը, որը վերաբերվում է մեթոդներին:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ***ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա***, բաժանվում են 3 խմբի՝ պասիվ, ակտիվ և փոխներգործուն: Ըստ ***գործունեության տեսակի*** մեթոդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ բացատրական-զննական, վերարտադրողական, խնդրահարույց ուսուցման, ուսուցողական-ճանաչողական գործունեության կազմակերպման, խթանման և մոտիվացիայի, վերահսկման և ինքնավերահսկման, ինքնուրույն ճանաչողական գործունեության, համակարգված ուսուցման: [Խաչատրյան Ս., 2020]

Դասի ճիշտ պլանավորումը ուսուցման գործընթացի արդյունավետության կարևոր նախապայման է: Դասին հանգամանալից նախապատրաստվելը մեծապես նպաստում է աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը և ժամանակի ռացիոնալ օգտագործմանը:

Ուսուցչի մասնագիտական որակներից մեկն էլ դասը ճիշտ պլանավորելն է, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է:

Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- ✓ Ի՞նչ սովորեցնել:
- ✓ Ինչո՞ւ սովորեցնել:
- ✓ Ինչպե՞ս սովորեցնել:

Ելնելով զարգացնող կրթության սկզբունքներից՝ ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերել,

- ✓ սովորել սովորեցնի,

- ✓ ուսուցման ընթացքում գլխավոր ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա,
- ✓ ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հեռակա խնդիրների լուծումը, ինչպես նաև պետք է հաշվի առնի նախադրյալները. աշակերտն ի՞նչ նախնական գիտելիք ունի այդ թեմայից և ի՞նչ հմտություն պետք է ունենա դասը հաջող յուրացնելու համար:

Դասից առաջ նախապատրաստական աշխատանքներ կատարելիս ուսուցիչը մտածում է դասի պլանավորման հետևյալ քայլերի մասին.

ա/ Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում:

բ/ Սովորողների կողմից նյութի յուրացման աստիճանը բացահայտող ապացույցներ:

գ/ Դասաժամի բուն ընթացքի պլանավորում

ա. «Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում» նշանակում է, որ ուսուցիչը իր համար հստակեցնում է հետևյալը, թե ինչ ենք ցանկանում, որ աշակերտներն այս թեմայից սովորեն, որոնք են այն հիմնական հասկացություններն ու գաղափարները և չափորոշչային ինչ մակարդակ պետք է ապահովի ուսուցման գործընթացի այս փուլը, ինչպիսի՞ վերջնարդյունքներ ենք ակնկալում: Ի՞նչ ենք ցանկանում մատուցել, ի՞նչ ուղիով, «ի՞նչ միջոցներով»: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված են դասի նպատակների իրականացմանը և ցանկալի վերջնարդունքներն:

բ. «Ապացույցներ, որոնք հաստատում են սովորողների կողմից նյութի յուրացման աստիճանը» քայլը ակնկալում է այն ուղիներն ու մեթոդական հնարները, որոնք երաշխիք են հանդիսանում սովորողների կողմից նյութի ամբողջական յուրացման համար և ապահովում են ուսուցման գործընթացի առաջընթացը:

գ.«Ուսուցման բուն ընթացքի պլանավորում» քայլով ուսուցիչը ընտրում է նոր նյութի մատուցման եղանակը՝ առաջնորդվելով հետևյալով. ինչպիսի՞ մեթոդական հնարների շնորհիվ սովորողների մոտ կապահովվի թեմայի յուրացման բարձր աստիճանը: Ուղղակի կապ պետք է լինի ընտրված մեթոդների և նպատակների միջև:

Արդյունավետ ուսուցման կարևոր նախապայմանն է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է, որ ուսուցիչը ուսուցանվող թեմային մանրամասն ծանոթանա, քայլ առ քայլ պատկերացնի դասի ողջ ընթացքը և պլանավորի այն՝ համաձայն ստորև նշված յոթ կետերի:

1. Ներածություն /կազմակերպչական հարցեր/,
2. Դասի նպատակների և ակնկալվող վերջնարդյունքների ծանոթացում,
3. Նոր նյութի ներկայացում, ուսուցման գործընթացի մոդելավորում,
4. Ընկալման մակարդակի ստուգում,
5. Սովորողների վերահսկվող գործողությունների կազմակերպում,
6. Ինքնուրույն աշխատանք,
7. Գնահատում և եզրափակում:

Դասից առաջ ուսուցիչը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են իմ կողմից ընտրված մեթոդական վարժությունը կատարելու:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը:
- Իրատեսակա՞ն է արդյոք այդ դասի ընթացքի պլանավորումը ըստ ժամանակի:
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների ձեռք բերումները, ինչ չափանիշներով:
- Առարկայի նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել սովորողների մոտ:

Դասին նախապատրաստվելու կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի կահավորումը՝ տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին համապատասխան:

Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը, «համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի՝ արդյո՞ք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են, եթե փորձ է կատարելու, հարկ է, որ նախապես մեկ անգամ ևս այն կատարի: Սա ուսուցչին լրացուցիչ վստահություն է ներշնչում, օգնում է դասի հաջող ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը: [ԿԶՆԱԿ հիմնադրամ]

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է: Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- Դասի թեման:
- Դասի նպատակները (կրթական, զարգացնողական, դաստիարակչական):
- Դասի տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման):
- Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում:
- Դասի ընթացքը:
- Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում):
- Դասավանդման մեթոդները՝ բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, զրույց, զրույցի տարրերով պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինքնուրույն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով:
- Աշխատանքների ընդունում. սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում: [Այվազյան Հ., 2014]

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը։ Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը։ Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված։

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝

1. առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման
2. աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, և տվյալ հնարքի կիրառման հմտություններ
3. տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը։

[«Կրթություն» շաբաթաթերթ, 29 հոկտեմբեր, 2016 թ.]

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝

- Դասի սկզբի կազմակերպում:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում:
- Աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ:
- Ծանոթացում նոր նյութի հետ:
- Գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում (կրկնություն, կատարելագործում և գիտելիքների ու կարողությունների կիրառում)։
- Գիտելիքների համակարգում և ընդհանրացում:
- Տնային աշխատանքի կազմակերպում:

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման

վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝ լինեն հստակ, իրական և բաց, այսինքն աշակերտը պետք է հասկանա՝ ի՞նչ են իրենից ուզում և ինչպե՞ս այն կատարել:

Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 գագաթներ՝ «Դասի կառուցվածքային տարրերը», «Ուսուցչի գործունեությունը», «Աշակերտի գործունեությունը»:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը: [Այվազյան Հ., 2014]

1.2. Ինչպե՞ս ճիշտ գրել դասի պլանը

Դասի պլանի օրինակ

ԹԵՄԱ. Թեմայի անվանումը պետք է համապատասխանի դասագրքին կամ ուսուցչի կողմից մշակված թեմատիկ բաշխմանը:

ԴԱՍ № ../.. Դասի հերթական համարը և նրա անվանումը դուրս է գրվում ուսուցչի թեմատիկ բաշխման ցանկից:

ԴԱՍԻ ՏԻՊԸ. Սահմանում է ուսուցիչը՝ ելնելով դասի նպատակներից և խնդիրներից: Կարող է լինել համակցված դաս, նոր նյութի ամրապնդամն դաս, կրկնման-ընդհանրացման դաս և այլն:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ. Նպատակն այն կետն է, որին ուսուցիչը պետք է հասնի իր գործունեության միջոցով, այսինքն՝ նպատակը պատասխանում է **Ի՞նչ եմ ես ուզում՞** հարցին: Դասի նպատակը կարող է լինել կրթական, դաստիարակչական և զարգացնող:

Դասի նպատակը ակընկալվող վերջնարդյունքն է, որը պետք է լինի իրական և կոնկրետ, թեմայի շջանակում և կապվի նոր ՀՊՉ-ին: Դասին առընչվող նպատակադրումը հաճախ ուղեկցվում է հետևյալ խնդիրներով՝

- Դասի ընթացքում նպատակի փոփոխություն: Հաճախ ուսուցիչները մտավոր բավականություն են ստանում ոչ թե դասի արդյունքից, այլ նրանից, թե ինչով են զբաղվել երեխաները դասի ժամանակ: Իրականում տեղի է ունենում դասի նպատակի փոփոխություն՝ դրան հասնելու միջոցներով:
- Ֆորմալ մոտեցում նպատակադրմանը: Նպատակադրման անհստակությունը և անորոշությունը հանգեցնում են ուսուցչի և աշակերտների կողմից նպատակի չհասկանալուն:
- Նպատակի ուռճացում: Ըստ մասշտաբի նպատակները լինում են լոկալ և գլոբալ: Սովորաբար դասի ժամանակ առաջադրվում են գլոբալ նպատակներ, այսինքն նպատակ, որին չի կարելի հասնել մեկ դասի ընթացքում: Ռազմավարական, կրթական գլոբալ նպատակները ձևակերպված են ՀՀ կրթության մասին օրենքում և չափորոշիչներում: Գլոբալ նպատակները թելադրվում են հասարակության և պետության պահանջներից: Գլոբալ նպատակները մարդկային գործունեության ուղենիշներ են: Օրինակ՝ «սովորողների մտավոր զարգացումը», «գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են առօրյա կիրառության համար»: Եթե նպատակը առընչվում է կոնկրետ դասին, ապա այն լոկալ նպատակ է: Նպատակի տարբաղադրումը ենթադրում է գտնել այնպիսի միջոցներ և հնարավորություններ, որոնց միջոցով կարելի է ստուգել նպատակն իրականացվա՞ծ է, թե՞ ոչ:
- Ուսուցչի անձնական նպատակի առաջադրում: Նպատակը սովորողները չեն առաջադրում, դրա համար էլ դասը դառնում է անհետաքրքիր: Նպատակադրում գործողությանը մասնակից սուբյեկտների՝ ուսուցիչ, աշակերտ, նպատակների բացահայտումն է, մեկը մյուսի նկատմամբ նրանց դերաբաշխումը, փոխհամաձայնությունը և ձեռքբերումները: Այն պետք է անհատական լինի և համապատասխանի պլանավորված արդյունքին:

Նպատակները պետք է լինեն՝

- *Տարբաղդատվող՝* նշանակում է առկա են հնարավորություններ և միջոցներ պարզելու համար նպատակը հաղթահարվա՞ծ է, թե՞ ոչ: Չափողականության չափանիշները որակական և քանակական են:
- *Կոնկրետ:*
- *Հասկանալի:*
- *Գիտակցված:*
- *Յանկալի արդյունքը նկարագրող:*
- *Խթանող (գործողության մղող):*
- *Ճշգրիտ:*

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Հակիրճ թվարկել կրթական, դաստիարակչական և զարգացնողական խնդիրները: Դասի խնդիրներին վերագրել հետևյալ բաղադրիչները՝

1. **Կրթական**.
    - գիտելիքներ (հասկացություններ, երևույթներ, մեծություններ, բանաձևեր, օրենքներ, տեսություններ և այլն)
    - կարողություններ

      ա/ առանձնահատուկ (խնդիրներ լուծել, չափագրումներ անել և այլն)

      բ/ հանրակրթական (մենախոսական և երկխոսական գրավոր և բանավոր խոսք, ուսումնական և լրացուցիչ գրականության հետ տարաբնույթ աշխատանք, գլխավոր նյութի առանձնացում պարզ և բարդ պլանի, նշումների, ալգորիթմի, թեզի, համառոտագրության, գծապատկերի, վերապատմելու, թեմատիկ պատասխանի, համեմատական բնութագրման, զեկույցի տեսքով և այս ամենը սահմանելու կարողություն)
    - հմտությունը ինքնեկության հասցված կարողությունն է:
2. **Դաստիարակչական.**
    - բարոյական և էսթետիկական պատկերացումներ, համակարգված աշխարհայացք, վարքի կանոններին հետևելու և օրենքների կատարման կարողություն,
    - աշակերտի կարիքները, սոցիալական վարքի մոտիվացիան, արժեքները և արժեքային կողմնորոշումը, աշխարհայացքը:

3. **Զարգացնող**.
   - Խոսքի, մտածողության զարգացում, աշակերտի զգայունակության (զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալման) մակարդակի զարգացում, զգացմունքային-կամային (զգացմունքներ, կամային և ընկալման անհանգստություններ) և կարիք-մոտիվացիոն հատկանիշների զարգացում:
   - Մտավոր աշխատանք.վերլուծություն, համադրում, դասակարգում, դիտողականություն, եզրահանգումներ անելու կարողություն, օբյեկտների հատկությունների կարևորում, գործունեության նպատակների և միջոցների առանձնացման կարողություն, արդյունքների ստուգում, փորձի պլան կազմելու ունակություն, վարկածների առաջ քաշում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. Այս շարքում իրենց տեղն ունեն կրթական տեխնիկական միջոցները՝ պրոյեկտոր, տեսա և ձայնա նվագարկիչներ, հեռուստացույց, համակարգիչ, տեսա և ֆոտոխցիկներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Կարելի է այս ցուցակին ավելացնել նաև դիդակտիկ և ցուցադրման համար անհրաժեշտ նյութերը՝ քարտեր, թեստեր, պաստառներ, կինոնկարներ, աղյուսակներ, սկավառակներ և այլն: Գրատախտակը ևս համարվում է դասի համար անհրաժեշտ սարքավորում:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի: Հաճախ դասի պլան-համատոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝

1. Կազմակերպչական մաս ՝ 2-3 րոպե
2. Նոր գիտելիքների հաղորդում՝ 8-10 րոպե
3. Աշակերտների գործնական աշխատանք՝ 20-26 րոպե
4. Տնային առաջադրանքի հանձնարարում՝ 3-5 րոպե
5. Դասի ամփոփում՝ 1-2 րոպե:

Կարելի է նշել նաև այն տնային առաջադրանքը, որն աշակերտները կստանան հաջորդ դասին:

Այսօր առաջարկվում են դասի պլանավորման բազմաթիվ տարբերակներ, որոնք օգնում են ուսուցչին արդյունավետ դարձնել դասը, հնարավորություն են տալիս շարունակական ինքնակրթության և ինքնազարգացման, ինչպես նաև՝ լսարանում ստեղծել համապատասխան աշխատանքային միջավայր: [Այվազյան Հ., 2014]

Որպես օրինակ ստորև ներկայացնում ենք պլանավորման 2 ձև /աղյուսակ1, աղյուսակ 2/:

Դասի պլանի ձևաչափ

Ուսուցիչ _____ Ամսաթիվ

Առարկան –		
Դասարանը -	Ուս. տարի -	Կիսամյակը -
Թեման		
Դասի թեման		
Դասի նպատակը		
Վերջնարդյունքները		
Ընդհանրական խաչվող հասկացությունները		
Գործունեության ձևեր		
Միջառարկայական կապերը		
Անհրաժեշտ նյութեր,		

տեխնիկական միջոցներ	
Հիմնական հասկացություններ	
Գնահատում	

Դասի ընթացքը			
Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
Կազմակերպչական մաս /1-2 րոպե/			
Խթանման փուլ			
Իմաստի ընկալման փուլ /ուղղորդված աշխատանք, ինքնուրույն աշխատանք/			
Կշռադատման փուլ			
Անդրադարձ			
Գնահատում			

Աղյուսակ 1.

Քայլ 1. Դասի սկիզբ՝ խթանում
Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նախկին գիտելիքի հետ:
Քայլ 2. Նոր նյութի ներկայացում
Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Որո՞նք են ներկայացվող նյութի կարևոր դրույթները:
Քայլ 3. Ուղղորդված-գործնական աշխատանք
Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին համագործակցված աշխատելու,

ուսուցչի ուղղորդմամբ կատարելու գործնական աշխատանք տրված նյութի վերաբերյալ:
Քայլ 4. Ինքնուրույն աշխատանք / իմաստավորում
Ինչպե՞ս է ուսուցիչը աշակերտներին հնարավորություն տալիս ինքնուրույն աշխատել: Ինչպե՞ս են աշակերտները ինքնուրույն կիրառում օրվա սովորածը:
Քայլ 5. Դասի ավարտ / կշռադատում
Ամփոփում են դասի կարևոր մասերը: Անհրաժեշտության դեպքում տրվում է տնային/ արտադասարանային առաջադրանքներ:

Աղյուսակ 2.

Գլուխ 2.Դասի պլանավորմանն ուղղված գործողությունների վերլուծություն :

Հետազոտական աշխատանքի թեմայի /Դասի պլանավորում, պլանավորման արդյունավետ եղանակներ՝/ ընտրությունը կապված է հանրակրթական պետական նոր չափորոշչում կատարված փոփոխությունների հետ, որը ենթադրում է դասի պլանավորման նոր մոտեցումներ: Ուսուցիչների մի մասը պնդում է, պլանավորումը ՝ավելորդ՝ աշխատանք է, քանի որ դասը ստեղծագործական աշխատանք է, կամ, լավագույն դեպքում, այն անհրաժեշտ է սկսնակ ուսուցչին: Սակայն նոր ՀՊՉ-ի հիմքում ընկած են 8 կարողունակությունները, որի հենքի վրա ձևավորված են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտների վերջնարդյունքները: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որին ուսուցիչը պետք է ամենօրյա պատրաստվի:

Հետազոտությունը կատարվել է 3 ուղղությամբ՝

1. Բերդի տարածաշրջանի 4 դպրոցներում՝ Բերդի թիվ 1 հիմնական դպրոցում, Բերդի թիվ 3 հիմնական դպրոցում, Բերդի թիվ 4 հիմնական դպրոցում և

Մոսեսգեղի միջնակարգ դպրոցում: Նախապես կազմված հարցաթերթիկների միջոցով իրականացրել ենք հարցումներ /աղյուսակ 3/:

1. Անհրաժե՞շտ է գրել օրվա դասի պլան:
2. Արդյունավետ դաս կազմակերպելու համար ըքանո՞վ է կարևոր դասի պլանը /1-10/:
3. Օրվա պլանը հնարավորություն է տալիս՝ ա/ պահպանել դասի կառուցվածքը, բ/ կառավարել ժամանակը, գ/ կիրառել հմտություններ և մեթոդներ:
4. Կողմ եմ օրվա հակիրճ պլանին:
5. Կողմ եմ օրվա ընդարձակ պլանին:
6. Օրվա պլանն անհրաժեշտ է. ա/ միայն սկսնակ ուսուցչին, բ/ և՛ սկսնակին, և՛ փորձառուին:

Աղյուսակ 3.

Յուրաքանչյուր դպրոցից մասնակցել է 10 ուսուցիչ /աղյուսակ 4/:



Աղյուսակ 4.

Հետազոտության արդյունքը ցույց է տվել, որ հարցվածների 75%-ը գտնում է /աղյուսակ 5/, որ պլանավորումը արդյունավետ և համակարգված դասի հիմքն է: Այն ուսուցչի համար քարտեզ կամ կողմնացույց է, որը նրան դարձնում է ավելի ինքնավստահ, և դասի վերլուծության ժամանակ ապահովագրում է դասի ընթացքի բոլոր քայլերը: Հարցվածների 25%-ը գտնում է /աղյուսակ 5/, որ պլանավորումն անհրաժեշտ է սկսնակ ուսուցչին, սակայն կարծում են, որ բերված փաստարկները համոզիչ են, որ այսօր դասի ամենօրյա պլանավորում պետք է կատարի յուրաքանչյուր ուսուցիչ:



Աղյուսակ 5.

2. Աշակերտների շրջանում կատարած հարցման արդյունում պարզեցինք, որ ամենահետաքրքիր և կազմակերպված դասը պլանավորված դասն է եղել /պլանը նախապես նայել էինք/:

3. Դասալսումներ ենք կատարել դասի պլանով և առանց դասի պլանի ուսուցում իրականացնող 21 ուսուցիչների մոտ: Նրանցից 12-ը ունեին պլան, 9-ը՝ ոչ: Այն ուսուցիչները, ովքեր կատարել էին դասի պլանավորում.

- Նյութը և առաջադրանքները հասկանալի կերպով բացատրում էին աշակերտներին:
- Սովորելու գործընթացը ուներ հստակ կառուցվածք, և քայլերը փոխկապակցված էին:
- Ուսուցիչը ապահովում է դասաժամի կարգավորված ընթացք և ճիշտ կառավարում ժամանակը:

- Դասն ունի նպատակ, որը կապակցված է վերջնարդյունքի հետ:
- Ուսումնական մեթոդները հարմարեցված են աշակերտներին, ինչպես նաև դասաժամի նպատակներին:
- Աշակերտները մասնակից են:
- Ուսուցիչը խթանում է ինքնուրույն սովորելը:
- Խթանվում համագործակցային սովորելը:
- Դասն ունի ամփոփում:
- Կատարվում է գնահատում:

Հակառակ դեպքում ուսուցիչը կարծես շփոթված է ողջ դասապրոցեսի ընթացքում, գիտի նյութը, սակայն դասի նպատակները և վերջնարդյունքները հստակ չեն. հիմնականում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, չկան ընտրված մեթոդներ, կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը, չի կատարվում ժամանակի ճիշտ կառավարում:

Եզրակացություն

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով դասի պլանավորման վերաբերյալ առկա տեսական նյութերը և գործնականում կիրառելով ալանավորման արդյունավետ եղանակները, եկանք այն եզրակացությանը, որ ուսուցման արդյունավետության կարևոր պայմաններից է դասի պլանավորումը:

Բոլոր հետազոտությունները ցույց տվեցին, որ պլանավորված դասը թույլ է տալիս իրականացնել ժամանակի պահանջներին համապատասխան դասապրոցես, քանի որ դասի նպատակը ոչ միայն գիտելիք մատուցելն ու դրա վերարտադրումն է, այլև հմտությունների ձևավորումն ու դրանց օգնությամբ ձեռք բերված գիտելիքները վերաիմաստավորելն ու խորացնելը:

Երբ ուսուցիչը ունենում է դասի պլան, կարողանում է արդյունավետորեն կառավարել ռեսուրսները , հստակ սահմանել նպաակներ, ուստի, այն պարտադիր նախապայման է հաջողված դաս ունենալու համար:

Առաջարկություններ

Ելնելով այն հանգամանքից, որ դասի պլանավորման մեջ շատ նորություններ և փոփոխություններ կան, առաջարկում ենք միասնական որևէ ձև ընտրել յուրաքանչյուր առարկայի համար, և ուսուցիչը ձեռքի տակ ունենա օրինակելի դասի պլաններ, որը կթեթևացնի ուսուցչի ուսերին ծանրացած ամենօրյա աշխատանքը և սկզբնական շրջանում կհանդիսանա աշխատանքի ճիշտ կազմակերպման ուղեցույց:

Գրականության ցանկ

1. Այվազյան Հ. ՝Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում՞, ուսուցչի ձեռնարկ, 2014
2. Թադևոսյան Մ., Խաչատրյան Ս., Սողոմոնյան Վ., Հովհաննիսյան Գ., Մեյրոյան Ն., Մաթևոսյան Մ., Շմիտ Բ., Մոդել Դ. ՝Մասնակցային դպրոց՞ / Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում / կրթական ռեսուրսներ
3. Խաչատրյան Ս. ՝Ուսուցման արդյունավետ հնարներ՞, 2020
4. ՝Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար՞, կիրառական ուղեցույց, հատոր 3, Եվրոպայի խորհուրդ
5. «Կրթություն» շաբաթաթերթ, 29 հոկտեմբեր, 2016 թ.
6. ԿԶՆԱԿ հիմնադրամ
7. multiurok.ru
8. rm.coe.int
9. innostud.am
10. library.fes.de